

մի դեսեստինին միայն 6-8 փութ և այն էլ ոչ միշտ, Սրա վրայ պէտք է աւելացնել նաև այն, որ բոլոր այս միջոցները գործածական են միմիայն ուրիշ տեսակ պարարտացնող նիւթերի հետ խառն, նոցա աւելի ուժեղացնելու համար, Առանձին վերջրած այս թանկագին միջոցներից և ոչ մէկը այնքան էլ մեծ օգուտ չեն կարող տալ, որ հարկ լինի աղքատ երկագործներին մեծամեծ ծախքերի տակ դնել:

Իբրև եղրակացութիւն այսքանը պէտք է տեսլ, որ ոչ մի պարարտացում կատարեալ օգուտ չի կարող տալ, եթէ հողերը վատ են մշակած: Այդ պատճառով վարելահողեր բարելաւելու ամենակարևոր և ամենամեծ հրաժեշտ միջոցը մշտապէս կարելի է համարել խնամքով և յարմար ժամանակի մշակումը: Այսպէս, օրինակ, պատահում է, որ գիւղացիները միայն յուլիսի վերջին են սկսում մշակել հարոսը՝ մի տարի հանգստութիւն վայելած հողը, որպէս զի աւելի երկար ժամանակ անասունները արօտատեղերից կարողանան օգտուել, Սա արդէն հակառակ է գիւղատնտեսական որոշ կանոնների, Արժէ արգելօք յուլիս ամսուայ մէջ արտահանել պարարտացնելու համար պատրաստ նիւթը, նա միայն կշորանայ և համարեալ ոչ մի օգուտ չի կարող տալ, Այլ և ի՞նչ յատկութիւն կարող է ունենալ աշնանացանի համար գործածուելիք այն երկիրը, որ մշակուած է միայն ամառուայ վերջերը:

Յաճախ ուշացնում են նաև գարնանային ցանքսերը, այն էլ ոչ թէ մի որևէ կարևոր պատճառով այլ միայն ծուլութեամբ: Երկիրը պարարտացնելու գործը կարևոր և անհրաժեշտ է, և այդ իսկ պատճառով մենք աշխատեցինք ցոյց տալ պարարտացնելու գլխաւոր տեսակները, Բայց աւելի կարևոր է, որ երկրագործները իրանք իմանան, թէ ինչ կերպ պէտք է վարուել հողի հետ, Առանց զրան ամենալաւ հողից անգամ, ամենայաջող պարարտացումից յետոյ, դարձեալ ոչինչ չի ստացուի:

Գ. Ղ.



## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԲՆՆԱԳԱՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՍՈՒԱՅԻՐ)

(Ետունակութիւն) \*

Դ.

ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ.

Կարծեցեալ թէոգոնիս: — Մ. Էմինի կարծիքով «հայոց վէպը» սկսուել է թէոգոնիայով, «դիցարանական աւանդութիւնով, դորա մէջ հանդէս էին գալիս առաջին սատուածները և նոյանից առաջացած հսկաները, որք մարտնչում էին դոցա դէմ, ինչպէս երբեմն Տիտանները — Զևսի դէմ: Այդ աւանդութեան բովանդակութիւնը, ինչպէս որ էր առհասարակ հին աղգերի մէջ, կազմում էին աստուածների ծնունդը եւ աշխարհի սկիզբը»<sup>1)</sup>: — Եւ այդպիսի դիցավէպի «նախերգանքն» է համարում Էմինը Սորենացու մէջ եղած Մար Աբասի պատմութեան սկիզբը (Ա. Թ.), որի մէջ խօսուում է հսկաների աշտարակաշինութեան և ինչ մասին:

Թէ Էմինի այդ տեսութիւնը զուտ երեւակայական է, շատ պարզ է: Սորենացին ոչ մի տեղ չէ յիշատակած թէ, այդ հատուածը «վէպից» է առած, և կամ հայոց առասպելների հետ որևէ կապ է ունեցած այլ, բնդհակառակն, պատմագիրը պարզապէս վկայում է, թէ դա Մար Աբասի գրքի սկիզբն է: Ուրեմն Սորենացին այդ կտորը մի գրաւոր աղբիւրից է առնում և ոչ «վէպից» կամ ժողովրդական երգերից: Թէ այդ գրաւոր աղբիւրը՝ Մար Աբաս՝ Սորենացու ստեղծածն է, թէ իրօք եղել է, թէ Անանուն (Սուտ Ագաթանգեղոս) է, կամ այլ ոք, — այդ արդէն ուրիշ խնդիր է: Ով էլ լինի այդ գրաւոր աղբիւրի հեղինակը, կարող էր իրենից յերկրած լինել այդ պատմութիւնը, քաղելով մի այլ գրաւոր աղբիւրից:

\* Shu. Ararats 1899 p. համար է. եր. 200:

<sup>1</sup> Էմին, Մ. Խորեն. եւ հայոց հին վէպերը, քաղգեւ. եր. 36. հոգ.:



Եւ արդէն պ. Սալաթեանը համոզելի կերպով ապացուցել է, որ այդ հատուածը զազմուած է մի յունական աղբիւրի հիման վրայ՝ քանի որ աշտարակաշինութեան մի նման պատմութիւն գրեթէ նոյն արտայայտութիւններով գտնուի ենք Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի մէջ։<sup>1</sup> Ուրեմն այդ հատուածը թէ ըստ Սորենացու վկայութեան եւ թէ ըստ իւր բովանդակութեան, հայ ժողովրդական առասպելների հետ առնչութիւն չունի։

Վահագնի առասպելը։—Բայց այդպիսի բնաւորութիւն չունի հայոց միակ դիցարանական առասպելը, Վահագնի մասին առասպելը, որը սակայն ոչ թէ հայոց երեւակայական «Վէպի» սկզբի երեւակայական թէոզոնիական մասի մի հատուածն է, ինչպէս ասում է Էմին, այլ մի անջատ երգ։

Բերենք Սորենացու այդ կտորն ամբողջ, քանի որ մեր յօդուածի ընթացքում պիտի պէտք գայ մեզ այդ<sup>2</sup>. Սորա որդի Բար, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելը աշխարհիս։

Երկնէր երկին, երկնէր երկեր,  
Երկնէր եւ ծերանի ծովն.  
Երկն ի ծովուն ունէր եւ զհարմրեկն եղեգնեկ.  
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեգան փող բոց ելանէր.  
Եւ ի բոցոյն վազէր խարանաշ պատանեկեկ,  
Նա հուր հեր ունէր.  
Ապա թէ բոց ունէր մօրուն,  
Եւ աշխունքն էին արեգակունք։

1. Χαλατ. Αρμ. Ξηροσ. եր. 48 հս.։

2. Յաջորդ հետաւածն ամբողջապէս վերցնում ենք Ս. Էջմեածին գրադարանի Մ. Զ. № 1686 մեռագրից, որի հետ քառացի նոյն են № Թ 1669, 1672, (վերջինիս մէջ ա չ ք ու ն ի ճ փոխանակ ա չ կ ու ն ի ճ), իսկ № 1665, 1671, 616 ունին «եւ ծ ո վ ն ծ ի ր ա ն ի ծ», «ա չ ի ղ ո ն ի ճ»։ № 1665 քաջի այդ՝ «սարբերում է դարձեալ «եւ ընդ եղեգան փող բոց ելանէր», «քաւրումսր» ընթերցումներով, իսկ № 616 ունի «Աս Տիգրանայ որդիս Բար՝ Տիրան՝ Վահակն» ընթերցումը։ Այս կարգի մեռագիրներին պատկանում է եւ Լուսինացու օրհակը։ Ս. Էջմեածին գրադարանի մնացած տասն ու մեկ մեռագիրները «սարգումի» տեսակին են պատկանում, բայց «սարբեր ընթերցումներով» որովհետեւ քաղաք Լուսինացու օրհակին են մօտեցնում։

Եւ զայս կրդեալ ոմանց փամբամբ՝ լուսք մերովք իսկ ականջօք։ Յետ որոյ եւ ընդ վիշապայ առէին յերգին կռուել նմա եւ յաղթել, եւ կարի իմն նմանագոյնս զհերակկեսայ նահատակութիւնսն նմա երգելոյ (Ա. լա.)։

Ուրեմն, ըստ Սորենացու, Վահագնի մասին այս պատմութիւնը գրքերի ծագում չունի, այլ մի առասպել է, որ երգուել է, եթէ Սորենացին Ե. դարու մարդ է, այդ դարում, իսկ եթէ աւելի ուշ ժամանակում է ապրել, Ե. կամ Ը. դարում՝ այս վերջին դարերում։—Երկու դէպքում էլ այնպիսի ժամանակի երբ քրիստոնէութիւնն իրօք իշխում էր, մշմարիտ է Սորենացու այդ վկայութիւնը, թէ՛ նա բացարձակ ստում է, իրենից մի երգ է սարքում Վահագնի վրայ եւ ասում է թէ մեր ականջով լսեցինք այդ։ Ուրիշ խօսքով, Վահագնի այդ առասպելը ժողովրդական է, թէ՛ մի շինծու բան, ինչպէս աշխատում է ցոյց առն պ. Սալաթեանը։

Վահագն Աստուած։—Վահագն, որի աստուածութիւնը բացի Սորենացուց յայտնի է եւ Ագաթանգեղոսից, Բիւզանդից եւ Աստուածաշնչից, Սորենացու մէջ դարձած է մարդ եւ յատկապէս Տիգրանի որդի։ Թէ հայոց նախարարների որդէ ցորդի դասաւորութիւնը, ինչպէս եւ ամբողջ ժամանակագրութիւնն ու ազգաբանութիւնը, Սորենացուն կամ նորա զրաւոր աղբիւրներին են, այդ յետոյ կրտսեանք։ Այստեղ նկատենք միայն, որ այդ ազգաբանութեան կարկատած լինելն երեւում է, օրինակ, միաձնու յիշատակութիւնից. «սորա (Տիգրանայ) որդի... Վահագն... սորա Ասաւան, սորա Ներսէս, սորա Զարեհ... սորա Արմոդ, սորա Բազամ, սորա Վան, սորա Վահէ, — անունների օրոնց մասին պատմագիրը ոչինչ, կամ գրեթէ ոչինչ չէ ասում՝ բացի Վահագնից։

Հայոց Վահագն աստուծու համարուելը Սորենացուց իրրեւ անցեալ ժամանակների հայ նախնիքներից մէկը՝ անշուշտ հետեանք է քրիստոնէութեան կամ աւելի ուսցիլունսլիզմի։ Եւ հիմնարկ ժամանակից ի վեր արդէն տարածուած եւ ապա քրիստոնեաների մէջ սովորական դարձած մի ուսմունք էր, աստուածները համարել հնագոյն ժամանակնե-



բում եղած նշանաւոր մարդիկ, որոնք յետագայում աստուածացել են: Այսպէս ոչ միայն Սորենացու մէջ Վահագն հայոց նախնիքներից մէկն է, այլ և Անանիա Շիրակացու մէջ մարդ են համարուում Վահագն և Բարշամ: Դարձեալ ոմանք յառաջնոցն Հայոց ասացին թէ ի խիստ ձմերանի Վահագն՝ նախնին հայոց՝ գողացաւ զյարգն Բաղասմայ [Բարշամայ] Ասորոց նախնոյն. զոր և մեք սովորեցաք բնախօսութեամբ Թարգողի հետ անուանել»<sup>1</sup>:

Նոյն ուսմունքին հետեւելով և ս. Լուսաւորիչ Ագաթանգեղոսի մէջ (Թիֆլիսի տպ. 1882 թ. 42) մարդ է համարուում Անահիտ դիցուհուն. «Այլ զոր դուք կոչես մեծ Անահիտ տիկին, լեալ իցեն արդեօք մարդիկ որ յայնժամ հրեմն ժամանակի Բանդի դիցապաշտ կախարչութեամբ զմարդիկն՝ որ յայնժամն էին՝ ցնորիւք կերպս ի կերպս լինելով պիւտան: Հաւանեցուցին մեհեանս շինել, և պատկերս կանգնել և երկիր պազանել»: Նոյնպէս և Եղիկի (Վենետիկ տպ. եր. 122) մարդ է համարուում Զրուանին. «Զի և Զրուանն իսկ մարդ լեալ է: այր մի քաջ առ Տիտանօքն, և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամենայն աղքէ հեթանոսաց՝ զքաջս առ գիւցաղունս ունել, հայեցեալ քեշակարկատին պարսից՝ թէ որովհետեւ մարդիկ աշխարհին դնա առ աստուածս ունին: ևս զերկնից և զերկրի և զամենայն արարածոց արարչութիւնն ի նմանէ կարծեցուցից»:

Այսպէս և Սորենացին—գուցէ և Վահագնի մասին առասպելի երգիչները, բայց ոչ առասպելը, զի անոր մէջ ոչ մի բառ չկայ, որ Վահագնի իրրեւ մարդ մտածուած լինելը ցոյց տայ:—նոյն ևւհեմերական ուսմունքին հետեւելով, համարում է Վահագնին մի մարդ, ուստի և դնում է նորան իւր յերկրած ազ-

գարանութեան մէջ: Բայց որովհետեւ նա կարծում էր, որ այդ մարդ Վահագն պաշտուել է յետագայում աստուածանալով, և ինքն էլ Վահագնին դնում է աստուածների շարքի մէջ՝ հաւասար Հերակլէսին, ուստի և նա Վահագնի մասին երգի բովանդակութիւնը մէջ բերելուց յետոյ, հարկաւոր է համարում աւելացնել. «Այլ ասեն զսա և աստուածացեալ, և անդրի ի վրաց աշխարհին կանգնեալ չափ հասակի սորա պատուէին դոհիք» (Ա. լա.)<sup>1</sup>: Այս հատուածը երգի բովանդակութեան շարունակութիւնը համարելու, ինչպէս ընդունում են Լմին, պ. Սալաթեան և ուրիշներ, ոչ մի հիմունք չկայ: Նուցա հիմունքը միայն՝ տպագրածով՝ «ասէին», մեր բերածով՝ «ասեն» բայն է, որ «երգել» են թարգմանում ըստ քմահաճոյս (Տեւ Բ. զլուս «ասեմ» բայի մասին): Այդ կտորը, ինչպէս հենց նիւթը և պատմելու ձեւը ցոյց են տալիս միայն պատմիչի խօսքերն են, որ նա, գուցէ նոյն իսկ Վահագնի մասին երգողներից լսելով, և կամ զրաւոր աղբիւրներից քաղելով, իրենից կցել է իւր պատմութեան մէջ՝ իւր մարդ ընդունած Վահագնի յետագայում աստուածացած լինելը յայտնելու համար միայն:

Ի՞նչ աստուած է Վահագն—Պատերազմի աստուած, զրում է պ. Սալաթեանը<sup>2</sup> հիմնուելով Ագաթանգեղոսի այն կտորի վրայ, ուր Տրդատի հրովարտակի մէջ ասուած է. «Բաջութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէ»<sup>3</sup>: Բայց այդտեղ միայն իրրեւ քաջ է ներկայացնում աստուածը և քաջութիւն շնորհում իսկ այդքանը, ինչպէս և Վահագնի համապատասխան լինելը Հերակլէսին, դեռ բուսական ապացոյցներ չեն, որ նա պատերազմի աստուած եղած լինի: Միւս կողմից ոչնչով չէ

<sup>1</sup> Անանիայի Շիրակունց Մնացորդ բանից, Ս. Պետրոսով, 1877. եր. 48.: Այստեղ Բարշամ անունով ձեռք բաղաւձ է, սակայն ո. Այիշմանի (Հիմնաւոր, եր. 293)՝ մեծի թիւ ունեցած մեղացի մէջ եղել է Բարշամայ Ասորեստանաց նախնոյն: Բարշամ է գրում ևս պր. Պեյցեր (Zur arm. Götterlehre եր. 120 Ber. u. d. Verh. d. K. S. Gesellsch. 1896): Վենետիկ գրադարանի մեղացի ընդօրինակարիւնն ասացած լինելով:

<sup>1</sup> Վերցած ս. Էրմամի գրադարանի № 1665 մեղացից. որի մեմբ են №№ 1671, 1672, 616 իսկ №№ 1669, 1686 ունին միայն «Այլ ևս ասեն զսա և աստուածացեալ» տարբեր ընթերցումը: Մնացած մեղացիներն ունին տպագրածի պէս. «այլ ասեիմ զսա և»... ընթերցումը: Ուրիշ տարբերութիւններ բոլորում ենք:

<sup>2</sup> Халат. Арм. Эпосъ, եր. 202:

<sup>3</sup> Ագարանգեղոս, Թիֆլիս 1882, եր. 83.



ապացուցուած և Վահագնին «որսի և յաղթութեան աստուած» համարելը<sup>1</sup> հիմնուելով թերեւս Վահագն անուան ծագումի վրայ պարսից Վերեթրագնա աստուծու անունից: Բայց եթէ պարսից Վերեթրագնան յաղթութեան աստուած է, հայոց Վահագնը այդ յատկութիւնը կարող էր ունենալ և չունենալ: Աստուածները մի ազգից միւսին անցնելուց յետոյ՝ միշտ անպատճառ չեն պահուում իրենց բնաւորութիւնը: Իսկ որսի աստուած համարելը հիմնուելով ինչ-որ եղնիկի զրոյցի վրայ, որ պատմութեմ է ս. Աթանազիոսին—Վահագնի իրաւունքի յաջորդի—մասին, բնաւ արժէք չունի<sup>2</sup> քանի որ այդ զրոյցը կարող է ոչ անպատճառ Վահագնից անցած լինել ս. Աթանազիոսին:

Որսի աստուած կամ «անտառի երէնքի պաշտպան», կամ թէ յաղթութեան և պատերազմի աստուած լինելը, որ միայն մականբութիւններ են, եթէ ճիշտ էլ լինին, դեռ չեն բացատրում Վահագնի բնաւորութիւնը կամ Ֆիզիկական ծագումը, որ ունի աստուածը, ինչպէս ճիշտ նկատել է պ. Գեղեցիկը՝ գրելով. «Աստուծու ֆիզիկական ընտելութիւնը, որ ծննդեան առասպելի մէջ դեռ պարզ երեւում է՝ յետնագոյն ժամանակում արդէն շատ յետ է մղուած և դժգունացած: Վահագն ներկայանում է արդ իբրեւ որսի և յաղթութեան աստուած»<sup>3</sup> Ուրիշ խօսքով, Վա-

հագն սկզբնապէս Ֆիզիկական ծագում ունի և յետնապէս միայն, եւհեմերարար մտածուելով, իբրեւ մարդ է ներկայանում կամ թէ վերացական գաղափարների ինչպէս են յաղթութիւն ու քաջութիւն մարմնաւորում աստուած:

Ի՞նչ Ֆիզիկական ծագում ունի Վահագն, կամ ո՞ր Ֆիզիկական երևոյթի անձնաւորումն է նա: Ահա թէ ինչ պէտք է իմանալ, Վահագնի մասին առասպելի խնդիրները հասկանալու և անոր ոչ-չինծու լինելն իմանալու համար:

Վահագն արեգակ:—Առասպելաբանութեան մասին քիչ ու շատ ծանօթութիւն ունեցող ամեն ոք խելոյն կընկատէ, որ արեգակնաման աչքերով, հրամայ ու բոցամօրուս պատանեակ աստուածը, երկնքի և երկրի, ծիրանի ծովի և մի բոյսի—եղեգնի որդին, բնութեան մի երևոյթի անձնաւորում պիտի լինի: Եւ այդ նկարագիրը բաւական յարմարում էլ է արեգակին: Ուստի և հ. Ալիշան (Հին Հաւառք, եր. 86) Վահագնի այդ նկարագիրն արեգակին է վերագրում: Վահագնի այս մերձեցումն արեգակին նոր չէ. Փիլոն Երրայեցու Վասն տաւրնանեան օրինաց՝ զրուածքի մէջ արդէն կայ. «Բանդի կոչեն ոմանք... զհուր Հեփեստոսն և արեգական (վարիանտ՝ արեգակն) զՎահա-

Charakter des Gottes ist nun späterhin stark zurückgedrängt und verblasst. Vahagn erscheint als Iagd- und Siegesgott, արեգակնած է. «Սմարյն նորա ընդ աբոյս (?) ընտելութիւնը, որ աբոյս և պայծառ կերպով կը ծանցուի ծննդեան առասպելի մէջ, աւելի ուշ ժամանակ քոչորովի յայտնի կը լինի: Վահագն կը ներկայանայ յիբաւի որսի և յաղթութեան դիմ: (եր. 25). Եղեցիկ և Ռեհեմալ կտրք. «Diese Genealogie ist natürlich wertlos, um so wichtiger das bekannte kleine Fragment eines auf Vahagn bezüglichen Liedes», որ նշանակում է. «Որքան այս ազգաբանութիւնը արժէք չունի հարկաւ, այնքան աւելի կարեւոր է (կշիւ ունի) Վահագնի վերաբերեալ երգի յայտնի փոքրիկ հատումը: Վեհեմի արեգակնի ճիշտագոյն հակասակն է դիւր, արեգակնի ճիշտագոյն արժէք չունի այդ ազգաբանութիւնը, ինչպէս նաև Վահագնի մասին աւանդուած երգին այն ծանօթ պատմիկն» (եր. 32). Գոնու է գայիս, որ երգն եւս արժէք չունի միակողմանի լինելով մեծ արժէք է այսիս անոր:

1. Gelzer, Zur arm. Götterlehre, եր. 108.

2. Տես Հ. Գեղեցիկի Հասարակական հայ դիցաբանութեան արդ Հ. 8. Թարսուանի Վեհեցիկ, 1897, եր. 36. արեգակնի ծանօթութիւնը, Բաղդա Հ. Բ. Սարգսեանի Ազգաբանութեան Ուսումնասիրութիւնից, եր. 215—218. Աւելորդ չի լինի նկատել, որ ցարդ Հայաստանի զանազան կողմերում այս կամ այն արքի, գլխաւորապէս Աստուածածնի վրայ պատմում է նոյն եղնիկի զրոյցը, որ մեծ աշխարհաբանութեան լինի համարում, ինչպէս և Սարգսեան, այլ իբրեւ մի հին գրոյց, որ արեգիկն է անցել ներսնաւորութիւնից: Ոչ մի տեղի չկայ, սակայն, այդ գրոյցը Վահագնի վերագրելու, և ոչ իսկ ս. Արամեզիակի համարելու միայն Վահագնի յայտնը:

3. Gelzer, Zur armen. Götterlehre, եր. 108: Պէտք է նկատել, որ այս կարեւոր ուսումնասիրութեան արեգակնածութեան մէջ, որ յիշուած է նախորդ ծանօթութեան մէջ, կան խոշոր սխալներ. օրինակ, մեր քննած այն կտրքը. «Der im Geburtsmythus noch deutlich erkennbare physische



զըն»<sup>1</sup> Այսպէս և աւելի ուշ դարերի գործ «Ծօնական մատենան» մէջ յիշուած է. «Ոմանք զարեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին և այլք զլուսին և Արեւմիս ձայնեցին»<sup>2</sup> Բայց այս երկու կտորը որոնցից Փիլոնի մէջ յիշուածը նշանակութիւն ունի, քանի որ այդ թարգմանութիւնը հին է համարուում զեռ բաւական չեն կարծելու, որ Վահագն Արեգակի կամ Ապոլոնի հետ նոյն է եղել: Այդ հատուածները միայն այն են ցոյց տալիս, որ անոնց թարգմանիչը կամ յօրինողը Վահագնին Ապոլոնին են մօտեցրել, մինչդեռ ուրիշները և աւելի շատերը, որոնց թուում և խորհրդանշան, յայտնի է, Վահագնին հաստատուում են Հերակլէսին: Այս երկուութիւնն անշուշտ այն պատճառով է, որ մեր աստուածներէն ոչ մէկն էլ կատարելապէս համապատասխան չէր կարող լինել յունաց այս կամ այն աստուծուն, այլ որոշ զճերով կարող էր այս, միանգամայն և այն աստուծուն մօտենալ աւելի կամ պակաս չափով:

Մենք Վահագնին սկզբնապէս արեգակի աստուած չենք համարում, այլ բնութեան մի ուրիշ երևոյթի, յատկապէս ամպրոպի անձնաւորում: Սակայն նախ քան մեր կարծիքը բացատրել, աւելորդ չի լինիլ տեսնել պ. Սալաթեանի կարծիքը Վահագնի վրայ եղած երգի մասին. և կրնանք ընթերցողները, եթէ մի փոքր երկար պիտի կանգ առնենք այդ մասին: Հարկաւոր է մի անգամ ծանօթանալ պ. Սալաթեանի համեմատելու եղանակին, որ նա յաճախ գործ է դնում իւր զրբի մէջ:

Մի նմուշ պ. Սալաթեանի «հետազոտութիւնից».— Պ. Սալաթեանն ևս Վահագնին արեգակ և նորա երգն արեգակի ծագման նկարագիր է համարում: Բայց, գծախտաբար, ինչ-

պէս շատ դէպքում, այստեղ էլ տարտամութեան մէջ է մնում: Նա գրում է. «Արդարեւ, այս հատուածը, թէպէտ և ոչ ամբողջապէս, խորհրդանշու աշխատութեան մէջ, գուցէ, միակ պահանջուած օրինակն է ուշ ժամանակի երգի, որ փոխարեւական արտայայտութիւններով, հաւանօրէն, պատկերացնում էր արեգակի ծագումը»<sup>1</sup> Մի ուրիշ տեղ (եր. 205) այդ «ոչ ամբողջապէս» բառը պարզում է փակագծերի մէջ. «խորհրդանշու գրուած է կար էլ ժողովրդի մէջ որեւէ քնարական ոտանաւոր, որ բովանդակում էր արեգակի ծագման նկարագիրը, բայց այդ երգն այն ձևով, որ ունի մեր պատմագրի մէջ (ըստի, գուցէ, առաջին չորս տողից), վատահիշի չէ (возбуждает недовѣріе): Ես տրամադիր եմ՝ անոր մէջ տեսնելու արուեստօրէն (искусственно) դէսից - դէսից քաղած մոտիւններ, որոնք ուշ ժամանակի երգի ձևով յերկրում են, սակայն ոչ միշտ յաջող. իսկ այդ մոտիւնները, ինչպէս ուրիշ դէպքերում վերցրած են զրաւոր աղբիւրներից, յատկապէս Աստուածաշնչից և Անանիա Շիրակացուց, որոնցից քաղելով՝ երգը սարքել է խորհրդանշան: Այնուհետեւ պ. Սալաթեանը գրում է (եր. 208). «Այդ երգն արուեստական է կամ գոնէ, հայ պատմագրի կողմից մշակութիւն (переработка) է կրել, այսինքն, ժողովրդական երգն եղել է, բայց խորհրդանշան փոփոխել է: Եւ այսքանը կարծես բաւական չէ, պ. Սալաթեանը (եր. 203) գրում է նաև. «Ես ենթադրում եմ՝ որ այս «երգը» լաւագոյն դէպքում կարող է եղած լինել մի քնարական ոտանաւոր, սակայն առանց առնչութիւն ունենալու Վահագնի հետ»:

Քանի տեսակ բան է ասում պ. Սալաթեանը: 1. Եթէ երգն արուեստական է և խորհրդանշան է սարքել Աստուածաշնչի և Շիրակացու մոտիւնների վրայ, բայց այն ժամանակ էլ ինչպէս կարող է դա միակ օրինակը լինել ժողովրդական երգի: 2. Եթէ խորհրդանշան սարքել է միայն երգի երկրորդ մասը, իսկ սկզբի երեք (ըստ պ. Սալաթեանի չորս) տո-

1. Փիլոնի թարգմանութիւնը ձեռն առնելու համար ոգտում ենք պ. Խաչատրեանի «Վեպից» եր. 202, ծան. 5, և ի. Մաս. «Նիսիւր» եր. 51: Նոյն հաստատութեան է և չափ. լեզ. Նոր թարգմ. մէջ Վահագն թափ առն. «Արեգակն գլխաւոր (Յուն. գլխաւոր), և յունական գերեզման (այսինքն գլխաւոր), և Արեգակն գլխաւոր (այսինքն գլխաւոր)»:

2 Տես Նոր թարգ. չափ. լեզ. Վահագն: 2. Այնչափ (Հին Հայաստ. եր. 86) մէջ է բերել նոյն հաստատութիւնը միայն Վահագն ընթերցումով:



ղը՝ Վերկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով, երկն ի ծովուն ունէր զկարմիրի և զդեղնիկն՝ ժողովրդական են, բայց ալ ժամանակ էլ ինչ խմած ունի խօսել արեգակի ծագման մասին և ասել թէ գուցէ կար էլ մի ժողովրդական երգ արեգակի ծագումը նկարագրող: 2<sup>է</sup> որ սկզբի առջերն առանձին վերցրած, առանց երկրորդ մասի կարելի չէ իրիւ արեգակի ծագում մեկնել: Մեր խելքից զոնէ բարձր է այդ, և պ. Սալաթեանը չէ ասում մեզ, թէ ինչպէս կարող է ինքը մեկնել 3. ինչպէս կարող է միեւնոյն արուեստական երգը, որ շինած է Աստուածաշնչի և Շիրակացու մոտիւներով լինել միանգամայն և զրական մշակութիւն կրած մի ժողովրդական երգ: 4. Կարող է մի արուեստական երգ, որի ինչ մոտիւներով սարքուած լինել ցոյց է տալի պ. Սալաթեանը լինել միանգամայն և ժողովրդական երգ, թէպէտ և ոչ Վազագնի վրայ:

Ահա՛ թէ ինչ է նշանակում «գուցէնեւրով» և «ես ենթադրում եմ—ներով» խօսել, և քանի՜ տեսակ իրար հակասող բան կարելի չէ մեկնոյն երգի մասին ասել: Բայց ինչ արժէք ունին այդպիսի անհիմն գուցէները: Այդ «գուցէներից» քիչ ու շատ արժէք ունի միայն այն «գուցէն» թէ Սորենացին, Իրացի գուցէ առաջին երեք տողից, սարքել է այդ երգն Աստուածաշնչի և Շիրակացու մոտիւների վրայ: Այստեղ զոնէ աշխատում է պ. Սալաթեանը հիմնել իւր կարծիքը: Տեսնենք նորա հիմունքը:

«Չունենալով ձեռի տակ բաւարար նիւթ շինծու հայ թագաւորի (Վազագնի) պատմութեան համար, բայց ցանկանալով աստուած-հերոսի փայլով ներկայացնել նորան, հայ պատմագիրը մի ինչ որ երգ շինել է ուղում նորա վրայ: Որովհետեւ նա Փիլոնի թարգմանութիւնից զիտէր—այդպէս է ցանկանում պ. Սալաթեանը, որ Սորենացին անպատճառ իմանար Փիլոնի թարգմանութիւնից—որ Վազագն արեգակի հետ նոյն է», այսինքն հաւասար է Ապոլոնին ուստի նա ուղում է Վազագնի վրայ այնպիսի երգ շինել, որ արեգակի ծագման նկարագիր լինի—Բայց հաստի զիտենք, որ Սորենացին Աստուածաշնչ-

չից գուցէ և ուրիշ տեղերից, զիտէ, որ Վազագն նոյն է Հերակլի հետ, և ինքը Սորենացին էլ երկու տեղ իւր պատմութեան մէջ (Բ. Ժ. Ժ.) Վազագնին Հերակլի հետ է նոյնացնում—Այդ նշանակութիւն չունի նորա քէֆն ուղում է, որ Վազագն այստեղ Հերակլից հեռանայ և Ապոլոնին մօտենալով արեգակ դառնայ—Բայց հենց իր «շինած» երգի բովանդակութիւնը մէջ բերելիս էլ Սորենացին Վազագնին Հերակլի հետ է համեմատում և ասում. «և կարի իմն նմանագոյնս զՀերակլայ նա հաստակութեանցն նմա երգէին»—Այդ էլ նշանակութիւն չունի. Սորենացին պէտք է այստեղ Վազագնին իրիւ արեգակ մտածած լինի, որովհետեւ Փիլոնի թարգմանութիւնը չէր կարող անյայտ լինել նորան—Բայց սխալ Սորենացին այդ առասպելը ներհակի պէս չէ մեկնում և ոչ մի ակնարկ չէ անում թէ այդ երգի մէջ արեգակի ծագման նկարագիրն է—Այդ էլ նշանակութիւն չունի: Բաւական է, որ մենք այդ երգի մէջ արեգակի ծագման նկարագիր ենք տեսնում: Ուրեմն պարզ է, որ Սորենացու համար էլ Վազագն արեգակ է, որ երգն արեգակի ծագումն է ցոյց տալիս և Սորենացու շինածն է: Եւ ահա՛ թէ ինչպէս:

Մի բարի օր, երբ Վազագնի վրայ երգ շինել է ուղում կարդում է Փիլոնի մէջ Վազագն արեգակի հետ նոյնացած և Ապոլոնի տեղ դրուած: ինչպիսի պատկեր տամ իմ արեգակն-Վազագնին մտածում է այդ ժամանակ պատմագիրը և շիւարած մտում թէպէտեւ նա քաջ ծանօթ լինելով յունական առասպելներին՝ գիտէր, որ արեգակն-Ապոլոնը (—արեգակն-Վազագն) ներկայանում է իրիւ ոսկեգիւսակ գեղեցիկ պատանի: Բայց յունական առասպելները չեն օգնում նորան, և նա այդ բարի ժամին յիշում է, որ Անանիա Շիրակացու մի գրուածքի մէջ կարդացել է. «Արեգակն... պատանի անմօրուս, ոսկեգիւսակ, որի բերանից յոյս ելանէ, սաստիկ Եւ ահա արդէն պատրաստ է Սորենացու համար արեգակն-Վազագնի պատկերը՝ պատանի: Բայց Սորենացին «ճարպիկ» է, որպէս զի չբռնուի իւր զոգութեան մէջ, նա Շիրակացու պատանին դարձնում է պատանեակ: Եւ



ահա այս պատանեակ բառը յիշեցնում է նորան Աստուածաշնչի մի կտորը. «Եւ էր (Դաւիթ) պատանեակ խաղաղեալ և աչօք գեղեցիկ» (Ա. թագ. 42): Այսանդից էլ վերջնում է խաղաղեալ բառը և որպէս զի այս գոգութեան մէջ էլ չբռնուի «խաղաղեալ» բառն առաջ է դնում և պատանեակ բառը դարձնում է պատանեկիկ ու գրում «խաղաղ պատանեկիկ»: Ուրեմն երկու բառը գտանք որտեղից է վերցրած,—մէկն Աստուածաշնչից, միւսը Շիրակացուց. և գտանք այնքան բարեխղճօրէն, որ մի վարիանտի» մէջ եղած «խաղաղեալ» բառն էլ չմոռացանք: Պարզ է, ուրեմն, որ «պատանեկիկը» Շիրակացուց է, իսկ «խաղաղեալն» Աստուածաշնչից:

Ապա «Շիրակացու մէջ նոյն տեղում» նոյն ճառի մէջ, նոյն երեսին» կարգացել է Յորի գրքից մի կտոր. «Զի՞նչ վայրք իցեն, ուր ծածկեմ ես զարեգակն ի գիշերի»: Եւ կարծում էք թէ յՍորենացին իւր արեգակն՝ Վահագնի համար այս կտորից էլ օգտուել է: Ո՛հ, ո՛չ: Այդ կտորը ծառայել է նորան միայն Յորի գիրքը յիշեցնելու: Իսկ մի անգամ որ Յորի գիրքը միան է բնկել, նա յիշել է, որ այդ գրքի վերջին գլուխների մէջ զաղանք և վիշապ անուան տակ նկարագրուած են երկու սոսկալի գաղան՝ ճիւղազետին (բեհեմօթ) և նորա բնկեր կոկորդիլոսը (լեխաթան), որոնցից վերջինի նկարագիրը պ. Սալաթեանն իւր Աստուածաշնչի համութեամբ համարում է «Հին Կտակարանի սատանայի ահեղ և մեծափայլուչ պատկերը» (грозное и величавое изображение): (Ոգորմիլն սատանայ, որ կոկորդիլոս էլ դարձար): Եւ մտածել է յՍորենացին. եկ ես այս սոսկալի վիշապ-կոկորդիլոսի (լեխաթանի) նկարագրից էլ օգտուեմ իմ «խաղաղ պատանեկիկի» համար: Զէ՛ որ այնտեղ (Յոր խա. 9) վիշապի համար ասած է. «Աչք նորա իբրեւ զտեսիլ արուսեկի»: ուրեմն իմ պատանեկիկն էլ աչք պիտի ունենայ: Բայց ի՞նչպիսի աչք: Այդ ժամանակ յՍորենացին իսկոյն յիշում է, որ Յայտնու-

թեան գրքի ժԹ. զլիսի մէջ նոյնպէս կարգացել է «աչք» բառը. «Եւ աչք նորա (Բանին Աստուծոյ) ըոց հրոյ»: Եւ շարունակել է մտածել յՍորենացին. «Ի՞նչպիսի աչք տամ իմ պատանեկիկին: Թէ ըոց ասեմ թէ արուսեկի, իսկոյն կիմացուի գոգութեանս: Հապա ի՞նչպիսի աչք. չէ՞ որ աչքը պէտք է լինի անպտածաւ, որովհետեւ այն հրէշ վիշապ-լեխաթան - կոկորդիլոսը — ըստ պ. Սալաթեանի սատանան — աչք ունի: Եւ ահա չգիտենք ի՞նչպէս,—երևի աչքը յիշեցնում է երեսը,— օգնութեան է հասնում Յայտն. գրքի մի ուրիշ, Ժ. գլուխը, ուր ասած է «երեսը նորա (Հրեշտակին) իբրեւ զարեգակն»: Այս լաւ եղաւ, ասել է յՍորենացին. եկ ես Յորի գրքից և Յայտն. գրքի ժԹ. զլիսից աչքը վերցնեմ, իսկ Յայտն. գրքի Ժ. զլիսից՝ արեգակը, և «գիտեմք հեռանամ իմ աղքիւրից» որպէսզի աչքի չընկնի թէ ես վերցրել եմ» աչքը Յորի գրքից և արեգակը՝ Յայտն. գրքից: Եւ որպէս զի գոգութեան ամենին չբռնուի չասեմ «աչք նորա իբրեւ զարեգակն», այլ աչքն աչկունք շինեմ արեգակն էլ արեգակունք և ասեմ «Եւ աչկունքն էին արեգակունք»: Ո՛հ, այժմ շատ լաւ է, ոչ որ կարող չէ իմանալ իմ խարդախութիւնը:—Եւ յՍորենացի, չի մտածել, որ քանի դար յետոյ պ. Սալաթեանը պիտի իմանար, որ աչկունքն պիտի լինի աչք, և վիշապ—կոկորդիլոսի աչքն է, իսկ արեգակունքը պիտի լինի արեգակն, և Յայտնութեան հրեշտակի երեսի արեգակն է:

Այնուհետեւ Յորի գրքի մէջ կարգացել է յՍորենացին. «ընդ ռեգունս նորա ծուխ ելանէ հնոցի հրոյ կայծականց: Անձն նորա կայծակունք, և ըոց ի բերանոյ նորա ելանէ»: Եւ այդ բառական չէ, Յայտնութեան Թ. գլուխի մէջ էլ «ելանէր ծուխ ի գրոյ» և ապա «Եւ ի բերանոյ նոցա (ձիոց) հուր ելանէր և ծուխ»: Եւ մտածել է յՍորենացին, այս կտորների մէջ վիշապ-կոկորդիլոս-լեխաթանի ըստ պ. Սալաթեանի՝ սատանի «քթից ծուխ է դուրս գալի». ծուխ է դուրս գալիս և մի դուրից ու ձիերի բերանից: Արի ես իմ արեգակի ծագման նկարագրի մէջ էլ ծուխ դուրս գալը մտցնեմ: Բայց այս երկու տեղից միայն «ծուխ ելանէր»

4. Շիրակացու թեոք այդ կտորը հաշտեմ բարգմանութեան մէջ այսպիսի է. «Զի՞նչ երկիր իցէ յորում յոյսն ագանիցի, և զի՞նչ տեղի խաղաղ» (Յոր. լր. 19):



բառերը վերցնեմ իսկ սատանի քթի՝ ձերերի  
ընթանի և այն գուրի տեղ դնեմ մի անմիտ  
բան, ընդ եղեգան փող, որ իսկի չիմացուի,  
թէ «Ծուխ ելանէր» բառերն այստեղից եմ վեր-  
ցրել: Բայց «սատանի» համար ասած է նաեւ,  
թէ «երեսնից քոց է դուրս գալի»: Այդ քոցն  
էլ պէտք է վերցնել արեգակի ծագման նկարա-  
գրի մէջ: Բոցը եւս որտեղից հանեմ որտեղից  
չհանեմ մտածել է Սորենացին: Եւ ահա նա  
այնքան անշնորհք է գտնուում որ էլ ուրիշ  
բան չէ գտնում որտեղից բոցը հանել կարո-  
ղանար՝ և բոցն էլ «ընդ եղեգան փողն» է  
հանում:

Այս են հիմունքները, որ բերում է պ.  
Սալաթեանը<sup>1</sup>, և այս են «գրքերից վերցրած  
մտախնայքը»: Եւ այս «հետազոտութիւնից»  
յետոյ պ. Սալաթեանը շտապում է աւելա-  
ցնել. «Այսպիսով Շիրակացու ոսկէգիսակ ան-  
մօրուս պատանին Սորենացու մէջ գտնուում  
է մի պատանեկիկ, որ հուր հեր ունի՝ քոց  
ունի մօրուս»: Բայց թէ այդ կերպարանափո-  
խութիւնն ինչպէս է կատարուում և ինչպէս  
«անմօրուս» բառը «քոց ունի մօրուս» է  
գտնուում «ոսկէգիսակը» գտնուում է «նա  
հուր հեր ունէր», և թէ Սորենացին որտեղից  
է վերցրել «եղեգան փողը»: «Եւ ի քոցոյն...  
վազէր» բառերը—մեզ այդ չէ տեսնում պ. Սա-  
լաթեանը:

Իսկ առաջին երեք տողը: Ո՛հ, այդ տո-  
ղերը «գուցէ ժողովրդական երգից» են, որոնք  
մենակ էլ վերցրած, թէպէտ և անհասկանա-  
լի կերպով, բայց դուցէ արեգակի ծագումն  
են նկարագրում: Եւ կարծում էք, որ եթէ  
պ. Սալաթեանն իւր ամբողջ գրքի մէջ այս-  
քան մեղմ սրտով է վերաբերում այդ երեք  
տողին, նա համոզուած է, որ այդ երեք  
տողը ժողովրդական են: «Գուցէ»: Մենք մեր  
կողմից գտնէ հաւատացած ենք, որ եթէ այդ  
երեք տողին խնայում է, անոր համար է միայն  
որ ուրիշ գրքերի մէջ, երեւի անոնց նմանը չէ  
որտեղ: Բայց պէտք չէր վհատիլ. «հետա-  
զոտութիւնը» կատարեալ անելու համար  
պէտք էր միայն որոնել, և այդ երեք տողն  
էր և մնացած բոլոր բառերն էլ դուրս կը

գալին: Եւ պ. Սալաթեանը թոյլ կը տայ  
մեզ, որ մենք շարունակենք նորա մեթոդով  
քննել:

Պ. Մառն արդէն նկատել է, որ «պ. Սա-  
լաթեանի մէջ բերած Թորի տողերից մէկը (խա.  
12) երրայական բնագրից բառացի կարելի է  
այնպէս թարգմանել, որ աւելի մօտ լինի  
Սորենացու ընդ եղեգական փող ծուխ ելա-  
նէր խօսքին, այնպէս որ «Ծուխ ելանէր» բա-  
ռերի կողքին լինի և «եղեգն»<sup>1</sup>, Է՛հ, Սորե-  
նացին, երրայեկնից չէր կարող օգտուել,  
կասէ գուցէ պ. Սալաթեանը: Բայց դրա  
դեղն էլ կայ: Մի՞թէ նոյն Թորի գրքի մէջ  
նոյն երեսին, նոյն գազանի ընկերի համար  
չէ ասած, «ընդ ազգի ազգի ծառովք ննջէ,  
առ պրտուով և եղեգամը»:— «Ի բոցոյն... վա-  
զէր» բառն էք ուզում: Բաց արեք Առաքե-  
լոց Գործք ԺԴ. 13. և կըգտնէք «վազեցին  
յամբօխէն»: Ուրեմն «վազէր» բառն էլ այս-  
տեղից է վերցրած, և «յամբօխէն» բառի  
տեղ «գիտմամբ» դրած է «ի բոցոյն»: Առաջին  
երեք տողից էք ուզում: Եսայի ԿԶ. 8. կը-  
գտնէք «երկնեաց երկիր» խօսքը: Ուրեմն մեր  
պատմագիրը «երկներ երկիրն» էլ այստեղից  
է վերցրած: Մնացին երկին ու ծովը: Դէհ,  
երկինք ու երկիր ու ծով միշտ իրար հետ կա-  
պուած են, ինչպէս և հենց նոյն Եսայի մարգ.  
սկզբում: «Լուր, երկին» և ունկն դիր, երկիր» և  
կամ Յայան. ԺԴ. 1. «երկնի և երկրի և ծո-  
վու»: Որ երկիրը երկնում է, երկինքն ու ծովն  
էլ հետը պիտի լինին: Այդ է պահանջում մտքի  
զուգորդութիւնը (accoiian), որին այնքան  
մեծ տեղ է տալիս պ. Սալաթեանը իւր հե-  
տազոտութեան մէջ Սորենացու հոգին վեր-  
լուծելիս: Թէ այդ էլ չէ բաւական և ծովն ան-  
կախ էք ուզում այդ էլ դժուար չէ: Թորի  
գրքի նոյն գլխի մէջ, նոյն երեսին, նոյն վի-  
շապ-կոկորդիլոսի—բառ պ. Սալաթեանի սա-  
տանայի—համար մի՞թէ չէ՞ ասած թէ, ծովի  
մէջ է լինում և «Ամենայն ոսկի ծովու ընդ  
նովա իրբե զիաւ ամբաւ: Եւացուցանէ զան-  
դունդ [ծովու] իրբե զկատասայ համարի զծով  
իրբե զոչինչ» (Թոր, ՍԱ. 21-22), ծովն էլ այս-  
տեղից է, ուրեմն: Թէ չէք հաւանում: Եստ-



նութեան գրքից էլ իր հաննիք այդ ծովը միթէ նոյն Յայտն. գրքի, նոյն ժ. գլխի մէջ, որից հրեշտակի երեսի արեգակը վերցրել է Սորենացին, ըստ պ. Սալաթեանի, և Վահագնի աչքի համար գրելի մի համար յետոյ (Ժ. 3) նոյն հրեշտակի համար չէ ասած. «Եւ զոսն իւր աջ ի վերայ ծովու»։ Ժովի ծիրանի ածականն էք ուղում։ Դէ որ մի անգամ Աստուածաշնչից «ծով» բառը զողանում է մարդ, այն ո՞վ է, որ «կարմիր ծովը» չյիշէ։ Բայց խօ Սորենացին զիժ չէր, որ «կարմիր ծով» գրէր, իսկոյն կիմացուէր, որ ս. Գրքից է. ուստի «կարմիր» բառն այստեղից վերցրել գրել է ծովի մէջ եղած եղեգնի վրայ, իսկ ծովի համար ուրիշ ածական է որոնել։ Եւ շատ հեշտութեամբ գտել է «ծիրանի» բառը, մանաւանդ որ Աստուածաշնչի մէջ կարմրի հետ այնքան յաճախ «ծիրանի» է յիշուած (օրինակ, Ելք. իր. 5. 8. Լա. 5. Լե. 35. Լթ. 3. 5. 8. 22. Լէն.)։ Ի՛հ, մնացին «հերն» և «ունէր»։ Էին» բառերը։ Վախենում էք, որ այդ բառերը չգտնենք Աստուածաշնչի մէջ։

Բայց այդպիսով, այդ եղանակով վարուելով, որ երգի այս կամ այն կտորը կարելի չէ Աստուածաշնչից և մի քանի ուրիշ գրքերից հանել։ Սակայն ի՞նչ արժէք ունին այն համեմատութիւնները, որոնց մէջ հետազոտողը ըովանդակութեան իմաստի վրայ ուշադրութիւն չէ դարձրած, և միայն ըստեր է վերցրած։ Հայերէն բառերը խօ բառարանի մէջ էլ կան, Նախ քան համեմատելը պ. Սալաթեանը պէտք է ցոյց տար թէ ի՞նչ իմաստի կապ ու նմանութիւն կարող էր լինել, իւր կարծած, «արեգակի ծագման» և ս. Գրքի վիշապ-կոկորդիլոսի նկարագիրներին մէջ։ Թէ արդեօք վիշապ-կոկորդիլոս-լեխաթանը որեւէ առնչութիւն ունի արեգակի ծագման հետ և կարող է այդ հրէշ գազանը որի փորը պղնձի վահաններ են, յօդերը գայլախաղ վեմեր ևն, իւր արտաքինով գոնէ որևէ նմանութիւն ունենալ «խարտեաշ պատանեկիկի» հետ, որին համարում է «արեգակի անձնաւորում»։ Իսկ եթէ այդ գազան լեխաթանը որևէ առնչութիւն անգամ չունի արեգակի հետ և նորա արտաքինի նկարագիրը ոչնչով

նման չէ «արեգակի ծագման», կամ Վահագնի նկարագրին, ի՞նչ արժէք ունի ասել թէ նորա նկարագրի մէջ ևս յիշուած են «աչք», «ծուխ և բոց ելանէ» բառերը։ Միթէ մեծ զարմանք է, որ աշխարհի վրայ «ծուխ ու բոց» են յիշուած և կամ աշխարհի վրայ «ծուխ ու բոց ելնում են»։ Եւ միթէ «ծուխ ելանէ», կամ «բոց ելանէ» խօսքն այնքան ընդորոշ մի ո՞՞մ է եւ առանձնապէս Աստուածաշնչին միայն յատուկ, որ եթէ մի տեղ «ծուխ ու բոց ելանէ» գտնենք, կարողանանք ասել թէ Աստուածաշնչից է վերցրած։ Այն որ աշխարհում է, որ ամեն թօնրից ծուխ ու բոց չէ ելնում։ Եւ կամ երբ մեր ժողովրդական երգերի մէջ այսօր ծուխ ու բոց բառերի հետ «ելանել» բայն է գործածուած։ «Սասման կելնէր բարակ ծուխ»։ «ըրցեր կելնէ»։ միթէ պիտի ասենք, որ Աստուածաշնչից է վերցրած։ Եւ կամ աչքը միայն հրէից բանաստեղծութեան մէջ պիտի մտնէր և միայն վիշապ-լեխաթանն աչք պիտի ունենար, որ երբ հայոց բանաստեղծութեան մէջ մի պատանեկիկ աշկունք ունի, կարողանանք ասել, թէ հայերն Աստուածաշնչից են վերցրել, և թէ այդ աշկունքը լեխաթանի աչքն է կամ Բանին Աստուծոյ, Այդպէս և արեգակը։ 2<sup>է</sup> որ այս է ասում պ. Սալաթեանը, 2<sup>է</sup> որ նորա համեմատութիւնները զուտ ըստական են եւ նոյն իսկ արտայայտութեան ձեւեր չեն, թէպէտ և նա «մոտիւններ» է կոչում։ Բայց նման «մոտիւններ» լինելու համար չէ որ հայոց երգի մէջ ևս ինչպէս ս. Գրքի մէջ է, աչքի հետ բոց պիտի լինէր, և ոչ արեգակն արեգակը երեսի հետ պիտի լինէր, և ոչ աչքի, ծուխն ու ըրցն էլ պատանու քիցի ու ընդանից պիտի լինէր և ոչ թէ «ընդ եղեգան փող»։ Գոնէ այդպիսի արտայայտութեան նմանութիւններ լինէին պ. Սալաթեանի մէջ բերածները։ Այդ ժամանակ զոնէ կասէինք, որ թէպէտ և իմաստով իրարուց շատ հեռի, բայց արտայայտութեան մի քանի եղանակով իրար նման են, մի կողմից լեխաթանի ու Բանին Աստուծոյ և միւս կողմից «արեգակի ծագման» կամ Վահագնի նկարագիրները։

Բայց նոյն իսկ եթէ այդպիսի արտայայտութեան նմանութիւններ լինէին, օրինակ,



Հայոց երգի մէջ էլ լինէր «պատանու քթից ծուխ ու բերանից բոց կամ կրակ է դուրս գալի», կամ «պատանու երեսքն էին արեգակունք», կամ «պատանու աչքն էին բոց հրոյ», կամ «պատանու աչքն էր արուսեակի նման» — միթէ նոյն իսկ այդպիսի նման արտայայտութիւններն առում ենք, որեւէ բան կարող էին ապացուցանել, թէ Հայոց երգի հեղինակը Յօրի ու Յայտնութեան գրքերից է վերցրած այդ արտայայտութիւնները: Միթէ անսովոր բան է զանազան աղգերի բանաստեղծութեան մէջ՝ հրէշների, վիշապների քթից ու բերանից ծուխ ու բոց դուրս գալը (չմտա հայերէն զարծուածը «քթիցը ծուխ դուրս գալ ելնել»), կամ երեսն արեգակի, լուսնի, արուսեակի հետ համեմատելը, կամ աչքը կրակի բոցի, և որ և է աստղի հետ: Համեցէք օրինակներ մեր ժողովրդական բանաստեղծութիւնից.

«Լուսու ասդ (արուսեակ) ես առաւօտուն»...

Սուրբաթդ (դէմքդ, երեսդ) արեգակ կը նմանի,

Պատկերդ արեգական նման տեսայ ես: <sup>1</sup>

«Էն ինչ ձօն էր՝ արեգական նման,

Ինչ կէսօր կամար կը կապի.

Էն ինչ միջնէկն էր՝ լուսնին նման,

Որ ասնինգլն կը բզբէ.

Էն ինչ պատկն էր՝ Լուսասդի նման,

Որ առաւօտան կեանքն կը ծաղկի»: <sup>2</sup>

«Փէլիդ կը տայ արեգական,

Պարմիր երես արուն կաթան»: <sup>3</sup>

«Երեսդ և արեւի պես,

Փերչէմդ (հերդ) սումա (ոսկի) թել նման»: <sup>4</sup>

«Արեւ նման շողշող կուսու,

Յորժամ սերով գալերդ ածես»: <sup>5</sup>

Ահա՛ ձեզ ժողովրդական կամ ժողովրդականի հետեւողութեամբ գրուած բանաստեղծութեանց մէջ երեսն արեգակի, լուսնի, արուսեակի նման, դէս ու դէն ածող աչքերն արեգակի նման շողշողուն: Միթէ Յօրի և կամ Յայտնութեան գրքէջ են վերցրած այդ նմանութիւնները: Բերենք օրինակներ և աչքերի բոցեղէն կամ հրաչեայ

լինելու մասին և քիթ ու բերանից ծուխ ու բոց դուրս գալու համար, թէ մեր և թէ ուրիշ աղգերի գրականութիւնից: — Բայց աւելորդ է այդ աշխատանքը, քանի որ պ. Սալաթեանի «մտօրէններ» ասածն այսպիսի արտայայտութեան եղանակներ անգամ չեն, այլ լոկ բառական նմանութիւններ, այսինքն «աչք: «ծուխ ելանել», արեգակն» հատ հատ վերցրած:

Այդ են պ. Սալաթեանի բոլոր հիմունքները: Ո՛չ, նա խօսում է և Հայոց երգի չափի մասին, որի համար յետոյ այլ և երգի շինովի լինելուն ապացոյց է համարում և երգի վերջին տողը. «Ինձ թուում է, որ երգի այսպիսի վերջը (заклочение) կարծես խանգարում է նոյն իսկ երգի արեգական ծագման գաղափարը. դուրս է գալի, որ հրաշալի պատանին, որ արեգակի ածնաւորումն է, նոյն իսկ արեգակը, դեռ ունի աչքեր, ինչպէս (словно) երկու արեգակ: Այս անհեթեթութիւնը (несообразность), իմ կարծիքով, նոյնպէս ցոյց է տալի, որ այդ երգն արուեստական է կամ, զոնէ հայ պատմագրի կողմից գրական մշակութիւն է կրած»: <sup>1</sup>

Ինչի մէջ է անհեթեթութիւնը, անո՞ր մէջ, որ արեգական անձնաւորում աստուածն արեգակնանման աչքեր ունի: Բայց եթէ պ. Սալաթեանը թերթէր մի երկու արեգակնաստուածների արտաքինի նկարագիրը, կը տեսնէր, որ հենց այդ արեգական անձնաւորում աստուածներն ունին արեգակնանման աչքեր. «Ամեն փայլուն, շողշողուն աստուած, որ արեգակն իրրեւ աչք ունի, կարող է լինել միայն երկինք-աստուած, կամ արեգակն-աստուած, լինի Զեւս, Վարունա, Ինդրա, թէ Օդհին»: <sup>2</sup> Այսպէս և Միթրան, լուսոյ և արեգական աստուած, միանգամայն և արեգակն, ոչ միայն արեգակնանման բոցեղէն աչքեր ունի, այլ հենց արեգակը նորա աչքն է:

Բայց դուցէ պ. Սալաթեանը այդ «անհեթեթութիւնը» տեսնում է երկու արեգակ ձեւի մէջ. սակայն չէ՞ որ երկու բառն ի-

1. Նախասարդեան. Հեփաթեր. 2. 81.

2. Շերեկց, Վանայ սագ, եր. 52.

3. Սեդրակեան, Քնար Մշեց, և Վան. եր. 22.

4. Ճամբիկեան, Հնարքիւնք Ակնայ, եր. 445.

5. Իրկուրեցի, Կ. Կոստանեանի հրատ, եր. 29.

1. Арм. Эпосъ ер. 208.

2. Darmesteter, G. Ormazd et Ahriman, Paris, 1877, եր. 33.



րեն պ. Սալաթեանի աւելացրածն է: Իսկ յոգնակի թիւը կը հարցնէ պ. Սալաթեանը: Շատ բարի բայց ո՞վ ասաց, որ այդ երգի մէջ չնոյն իսկ արեգակն»: Նիւթական արեգակի ծագումն է: Այդ դէպքում խօսք չունինք, անհետ թիւ թիւն է ասել. «Արեգակի աչքերն էին արեգակներ»: Բայց երգի մէջ խօսք չունինք արեգակի մասին չէ խօսքը, այլ մի պատանի աստուծու, այսինքն մարդակերպ աստուծու մասին, որ անպատճառ պէտք չէ, որ «քեալլագեօզ» լինի և միականի: Միթէ «քեալլագեօզ» և միականի է արեգական աստուած գեղեցիկ պատանի Ապոլոնը: Երբ միանգամ աստուածը մարդակերպ է, անշուշտ մարդու պէս էլ աչքեր, աչկունք պիտի ունենայ: Իսկ երբ աչկունքն արեգական հետ են համեմատուում, միթէ պ. Սալաթեանը չզիտէ, որ հայոց լեզուի քերականութիւնը պահանջում է, որ էական բայով ստորագրուող թուով համաձայն լինի իւր ենթակային և ասուի «աչկունքն էին արեգակունք», քանի որ իմաստն այն չէ, թէ արեգակն է այդ պատանու աչքերը, այլ աչքերն արեգակնանման էին: Անշուշտ, այս վերջին իմաստով կարող էր ասուել նաև «աչկունքն էին արեգակն»: Բայց չմոռանա՞նք, որ սա երգ է, և երգիչը մեզինքն ու ձեզինքն աւելի լաւ ճաշակ է ունեցել լեզուի երկու ձևից այն ընտրելու, որ ներդաշնակութիւն ունի և յատկապէս «արեգակունք» ձևը, որ «աչկունք» բառի հետ կազմում է նմանաձայնութիւն (alliteration), որ յատուկ է ժողովրդական երգերին և յատկապէս ինչպէս յետոյ կը տեսնենք, Վահագնի այս երգին:

Այս են պ. Սալաթեանի հիմունքները, որոնք ինչպէս ընթերցողը կը տեսնէ, ոչինչ ու ոչինչ չեն ապացուցանում թէ երգի արուեստական շինծու լինելու, և թէ երգի մէջ արեգակի ծագման նկարագիր տեսնելու նկատմամբ:

Երգի մէջ նկարագրուած պատանին և նորա ծնունդը մնում են և կը մնան որոշ չափով նման արեգակին և արեգակի ծագմանը, թէպէտ և ոչ յորենացին և ոչ երգը ոչ մի խօսքով ակնարկութիւն չեն անում արեգակի վրայ: Բայց մենք չենք համեմատել եր-

գի պատանին արեգական աստուածների հետ, քանի որ ինչպէս ասացինք, մենք Վահագնի անձնաւորութեան մէջ ոչ թէ արեգակն ենք տեսնում, այլ մի ուրիշ երեւոյթ՝ ամպրոպ: Այսպէս ըմբռնելով միայն հասկանալի է լինում երգի ամեն մի տողն ու բառը և Վահագնի կոչւել վիշապների հետ և վիշապաքաղ մակդիրը, և Վահագն անունը, և Հերակլի հետ նոյնանալը, և նոյն իսկ երբեմն Ապոլոնի հաւասար դրուելը: Բայց նախ քան այդ՝ մի երկու խօսք ևս մեր ապացոյցի եղանակի մասին:

Մ. ԱՅԵՂԵԱՆ

(նորոշումներ)



# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Der Armenische Volksglaube.—Manuk Abeghian, Leipzig, 1899. 8.<sup>o</sup> 128 էր.

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՈՏԸ—

ՄԱՆՈՒԿ ԱՅԵՂԵԱՆԻ.

Արարատի անցեալ համարում արդէն մենք յայտնել էինք այս գործի հրատարակութեան մասին և խոստացել մի քանի խօսք տուել: Պ. Արեղեան, որ մեր մէջ յայտնի է որպէս բանահաւաք իւր «Գաւթի» և Մհերով և որպէս գրող իւր այլ և այլ երկերով և յօդուածներով՝ սոյն գրքով կամենում է նկարագրել և լուսաբանել Հայոց ժողովրդական հաւատը, օգտուելով մեր նախնի մատենագրներից և ժողովրդական նիւթերի ժողովածուներից: Ժողովրդական նիւթեր հաւաքելու գործի սկզբնաւորութիւնը նոր չէ մեզանում և արդէն բաւական գործ կատարուած է: Թէև ոչ ըստ իր սպառած և կարգաւորուած, բայց հում նիւթերից անտու թիւններ կազմել՝ լուսաբանելով ըստ երեւութիւն անիմաստ և աննպատակ ծէսերն ու սովորութիւնները, անհասկանալի առասպելներ և աւանդութիւնների ծագումը՝ համեմատելով օտար ազգերի մէջ եղած նման երեւոյթների և հաւատալիքների հետ, նորութիւն է մեզ համար: Այդ կողմից պ. Մ. Արեղեանը արժանի է խորին շնորհակալութեան այս շարադրութեան համար: Պ. Արեղեանի գրքի գլխաւոր արժանաւորութիւնն այն չէ, որ